ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար **համացանցային էջերի հոսթինգի ծառայությունների մատուցման** ձեռքբերման նպատակով 2017 թվականի մարտի 15-ին կնքված «Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման» N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/36» ծածկագրով պայմանագրում **2017 թվականի հոկտեմբերի 31-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Կատարողի՝ «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից ստացվել է ծանուցում այն մասին, որ այն անվանափոխվել է «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ :

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի վավերապայմաններում «ԱրմենՏել» ՓԲԸ» բառերը փոխարինվել են «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ» բառերով :

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/36» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «31» հոկտեմբեր 2017 թ.

ՀՀ Մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), ի դեմս լիազորված անձ՝ Ռ. Գևորգյանի (նույնականացման քարտ՝ 002851202, տրված՝ 11.03.2014թ., 004-ի կողմից), որը գործում է 20.10.2017թ. տրված թիվ 00275/17 լիազորագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Ղեկավարվելով քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով ՀՀ Մշակույթի նախարարություն և «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» փակ բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի մարտի 15-ին կնքված «Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման» N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԾՁԲ-17/36» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի վավերապայմաններում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 «ԱրմենՏել» ՓԲԸ» բառերը փոխարինել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ» բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է անժամկետ:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բաժանորդ	Օպերատոր
ՀՀ մշակույթի նախարարություն	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ**
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Կառավարական շենք N 2,	հեռ.՝ 010-28-90-31, 099-22-34-07
հեռ.՝ (011) 58-51-78	ՀՎՀՀ 02500052
ՀՎՀՀ 02508054,	h/h 163004038879
h/h 900011012870	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	
աշխատակազմի գործառնական վարչությունում	
Աշխատակազմի ղեկավար՝	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի լիազորված անձ՝**
_____ Ս. Մուրադյան	_____ Ռ. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.